

ՊՈՒԵՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ (1918–1920)

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Առաջին Աշխարհամարտի վերջերուն, հայկական հարցի մօտալուստ լուծումի մը հեռանկարը՝ Հայաստանի անկախացումով, խթանած էր տարազրույթեան մէջ գտնուող ուժերու միասնութեան գործընթացը: Այդպէս է որ Միացեալ Նահանգներու մէջ ծնունդ առած է Հայ Ազգային Միութիւնը, 2 Ապրիլ 1917ին, քաղաքական գործունէութիւն տանելու համար:

Զայնակցելով Հիւսիսային Ամերիկայի հայ համայնքի ճիգերուն, ցամաքամասի երկրորդ կարեւոր համայնքին՝ Արժանթինի հայ համայնքին մէջ եւս համանման միութիւն մը ստեղծուած է, նախ՝ գաղութային իշխանութիւն մը հաստատելու, ապա՝ հայութեան քաղաքական իրաւունքները արծարծելու համար: Արժանթինահայ գաղութը նախօրօք պարած էր տկարացումի հոլովոյթ մը՝ երկրի տնտեսական վիճակին ու ներքին դժուարութիւններու պատճառով: Մինչ 1914ին հայոց թիւը 2000 կը գնահատուէր, 1916էն ետք անոնց շուրջ կէսը մեկնած էր Հիւսիսային Ամերիկա՝ պատերազմէն ըխած անգործութեան հետեւանքով: Այս պարագան կը տկարացնէր միութիւններու անդամակցութիւնը եւ գործունէութիւնը: Միւս կողմէ, 1916–17ին պառակտումներ կը ցնցէին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան՝ Պուենոս Այրէսի մասնաժողովը (հիմնուած՝ 1911ին) եւ Եկեղեցական Վարչութիւնը (հիմնուած 1912ին): Վերջինս կը բաժնուէր երկուքի, եկեղեցին կը փակուէր, իսկ հոգեւոր հովիւը՝ Պաղտասար քհնյ. Պարասութեան, կը ստիպուէր քաշուիլ գործօն աշխատանքէ:

Իրերու այս վիճակին մէջ, Արժանթինի մէջ Ազգային Միութեան կազմութեան առաջին քայլերը տեղի ունեցած են Հոկտեմբեր 1917ին: ՀԲԸՄ Պուենոս Այրէսի մասնաժողովի 7 Նոյեմբեր 1917ի ատենագրութիւնը կը վկայէ, որ նոյն օրը նամակ գրուած է ՀԲԸՄ Ամերիկայի Ծրջանակի Յանձնախումբին, ուր ի միջի այլոց ըսուած է, թէ «նոյնպէս գրուեցաւ թէ հոս կրնանք Ազգ[ային] Միութիւն կազմել: Ի՞նչ կերպով եւ ի՞նչ հիման վրայ. վասնզի մի քանի անգամ հնչակեանները եւ դաշնակցական-

ները անպաշտօն կերպով մեզի դիմած էին թէ դուք Ամերիկայէն ուեէ հրահանգ չէ^[7]ք ստացած, պատասխանուեցաւ թէ ոչ. ուստի այս մասին յանձնարումքի գաղափարը հասկնալու համար նամակը գրուեցաւ»³:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան⁴ Պուենոս Այրէսի կոմիտէութեան տոմարները կը յիշեն, թէ 5 Փետրուար 1918ին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութենէն⁵ ստացուած նամակ մը «կոչ կ'ընէ երեք հոսանքներու միջեւ համերաշխութիւն գոյացնելու նպատակով հանդիպում մը ունենալ»: Հանդիպումը պիտի կայանար 3 Մարտին, ՍԴՀԿ ակումբին մէջ⁶: Հնչակեանները նոյնպէս հրաւէր ըրած են ՀԲԼՄին, որուն անդրադարձը կը գտնենք ՀԲԼՄի մասնաժողովի 24 Փետրուարի ատենագրութեան մէջ.— «Հնչակեաններու կողմանէ հրաւիրագիր եկաւ Ազգ[ային] Միութիւն կազմելու համար: Ժողովս սիրով ընդունեց մասնակցելու. ուստի որոշուեցաւ ներկայ գտնուիլ ժողովոյ ամբողջութեամբ Հնչ[ակեան] Գլուպը»⁷:

Արդարեւ, առաջին փորձը իրագործուած է ՍԴՀԿի առաջարկով: Սակայն, սկզբնապէս, Հայ Ազգային Միութեան անդամակցած են ՍԴՀԿը, Հայաստանեայց Եկեղեցւոյ նոր վարչութիւնը⁸ եւ Հայ Աւետարանական համայնքը⁹: Պաշտօնական անունն է Unio'n Nacional Armenia¹⁰:

ՀԲԼՄը անդամակցութեան որոշ պայմաններ դրած է, որոնք են.—

«Ա.— Ընկերութեանց անուանց գատ հանգանակութիւն չը պիտի ըլլայ:

Բ.— Հանդէսներու առթիւ հանգանակուած դրամները պիտի յատկացուին Ազգ[ային] Միութեան:

Գ.— Ազգ[ային] Միութեան Մասնաժողովոյ պիտի մասնակցին նաեւ չէզոք անդամներ կազմակերպութիւններէ գատ. աւելի ընդհանուր հանգամանք տալու համար»¹¹:

Դուրս մնացած են ՀՅԴն եւ Եկեղեցւոյ հին վարչութիւնը (դաշնակցական)¹²: Դիւանը կը վարէր «Հաճրն» Ընկերութեան ատենապետը՝ Համբարձում Քեչեճեան: Ազգային Միութեան ծննդեան ստոյգ թուականը ցարդ յայտնի չէ, ամէնէն հաւանականը Մարտ ամիսն է¹³:

23 Ապրիլին, ՀԲԼՄը որոշած է վարչական կազմով չմասնակցիլ ժողովներուն, այլ ներկայացուցիչ նշանակել ատենապետ Յովհաննէս Պարգեւեանը¹⁴, իսկ 10 Մայիսի նամակով՝ ժամանակաւորապէս իր գրասենեակը ժողովներու համար տրամադրել¹⁵: 29 Մայիսին, Պարգեւեան հրաժարած է պաշտօնէն՝ «աւքի անհանգստութեան պատճառաւ»¹⁶:

Արժանթինահայ համայնքին մէջ 1916ին սկսած էր կամաւորական շարժումը. նշուած է 28 եւ 23 հոգինոց խումբերու մեկնումը՝ Խոսրով Ռչտունիի եւ Երուանդ Մալխասեանի գլխաւորութեամբ¹⁷, զորս թերեւս կազմակերպած է ՀՅԴն Եկեղեցւոյ Վարչութեան հովանաւորութեամբ¹⁸,

Թէեւ Նարսիսո Պինսյեան կը նշէ, թէ գայն նախաձեռնողը Փարիզի Ազգային Պատուիրակութիւնն էր¹⁹: 1917ին Ֆրանսական կառավարութիւնը քայլերու ձեռնարկած էր Պուենոս Այրէսի մէջ կամաւորական շարժումը կազմակերպելու համար²⁰: Այդ տարի եւս տեղի ունեցած են կամաւորական մեկնումներ, որոնց մասին ստոյգ տուեալներ չկան²¹: 1918ի սկիզբը մեկնումները շարունակուած են, թէեւ տարբերային կերպով: Մայիսին 13 հոգիները խումբ մը ժամանած է Ֆրանսա²²:

Կամաւորական շարժումի խնդիրը ուշադրութեան առարկան եղած է նորակազմ Ազգային Միութեան, որ ուզած է հեռագրել Միացեալ Նահանգներու իր կեղրոնին: Առ այդ, իւրաքանչիւր կազմակերպութենէ խնդրած է տաս փեսօ ծախսին համար, սակայն ՀԲԼՄի վարչութիւնը 22 Մայիսի նիստին մէջ «որոշեց այդ դրամը չի վճարել, քանի որ ընկերութեան նպատակէն դուրս է կամաւորական խնդրոյ մը համար դրամ յատկացնել, եւ եթէ Ազգ[ային] Միութիւնը կ'ուզէ նկարագրել (sic) կընայ տարբեր միջոցներով գոյացնել սոյն գումարը»²³:

Կամաւորներու եւ այլ հարցերու առիթով վէճեր յառաջացած են, կը հաղորդէ 5 Յունիսի ՀԲԼՄի ատենագրութիւնը: Այս վէճերուն հետեւանքով Եկեղեցւոյ ներկայացուցիչը հրաժարած է, իսկ ՀՅԴի ներկայացուցիչը՝ «հրաժարեցուած», մինչ ՀԲԼՄի մասնաժողովը որոշած է ձեռնպահ մնալ, մինչեւ ընդհանուր ժողովի գումարումը²⁴: Այս հակամարտութիւններուն գուզընթաց, 6 Յունիսին Էլ Տիարիօ օրաթերթը կը հաղորդէր, թէ մէկ ամսուան մէջ երկրորդ անգամ էր որ հայ կամաւորական խումբ մը՝ 25 հոգիներ, ճամբայ կ'ելլէր դէպի Ֆրանսա²⁵:

30 Յունիսին, Ազգային Միութիւնը վերանորոգելու փորձ մը եղած է՝ առաքելական եւ աւետարանական եկեղեցիներու, ՀՅԴի, ՄԴՀԿի, Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան²⁶ եւ ՀԲԼՄի մասնակցութեամբ (վերջինս՝ հաշտարարի հանգամանքով): Սակայն փորձը ո՛չ մէկ դրական արդիւնքի յանգած է, ձեւական հարցերու շուրջ ապարդիւն վիճարանութիւններու պատճառով: Ըստ ՀԲԼՄի ատենագրութեան, չէ յարգուած սկզբնական պայմանը՝ Միութիւնը վերանորոգելու, այլ ժողովը գումարուած է՝ լուծարուած միութիւնը վերակենդանացնելու: Սակայն ժողովին ընթացքին ՄԴՀԿը եւ Ազգային Միութեան ատենապետը՝ Քեչեճեան, պնդած են, որ կազմակերպութիւնը արդէն հաստատուած է: Վերջինս յայտարարած է, թէ «ով որ ուզէ թող գայ միանայ պակասը լրացնելու պայմանաւ: Այս ըսելով ալ մեկնեցաւ մինչդեռ ինքն էր ուժ տուողը Յունիս 19ի խառն ժողովին [ուր որոշուած էր այս ժողովը գումարել. — Վ.Մ.]»²⁷:

Ըստ ամենայնի, ՄԴՀԿի մղած պայքարը՝ Ազգային Միութեան գերակայութիւնը պահպանելու, հաճոյ չէ եղած նոյնիսկ ՀԲԼՄին իր պառակ-

տիչ բնույթին համար, ինչպէս կը տեսնուի ՀԲԸՄի մասնաժողովի 3 Յուլիսի արձանագրութենէն.—

«Ազգ[ային] Միութիւնը նամակով մը Բարեգործականի ներկայացուցիչը ուզած էր որ ղրկենք, սակայն Յունիս 30 Կիրակի օրուան խառն ժողովոյ որոշման համեմատ, իւրաքանչիւր կազմակերպութիւն խոստացած էր իւր ներկայացուցիչը գրաւոր կերպով ներկայացնել, Յունիս 30ի ժողովի վարչութեան իրենց տուած խոստումը չը յարգելով հանդերձ իրենք ներկայացուցիչ ուզած են մեզմէ, նամանաւանդ Ազգ[ային] Միութեան անունը կեղծելով, կնիք եւ թուղթ պատրաստել տուած են. եւ այդ թուղթ ու կնիքով հրաւիրած են. ուստի այսպիսի ապօրէն Ազգային Միութեան չի պատասխանել որոշուեցաւ, եւ խնդիրը յետաձգուեցաւ Ընդհանուր Անդամական ժողովոյ»²⁸:

Միայն Հնչակեան ներկայութեամբ ձեւական գոյութիւնը պահած Հայ Ազգային Միութիւնը Յուլիսին ղիմած է Իսրայէլ Արսլանին, որպէսզի Ֆրանսական ազգային տօնին առիթով գաղութի կողմէ Ֆրանսայի դեսպանատունը ճառ մը կարգայ՝ Դաշնակիցներու տողանցքէն ետք²⁹:

Պարզ է, որ Հայ Ազգային Միութիւնը ամբողջական անգործութեան մատնուած էր: Տեսակ մը հեղնանքի պէս, Նոյեմբեր 1917ին, ՀԲԸՄի մասնաժողովի գրած նամակը Մ. Նահանգներ՝ Ազգային Միութեան կազմութեան մասին, իր պատասխանը ունեցած էր (որուն կցուած էր Միացեալ Նահանգներու Ազգային Միութեան կանոնադիրը), սակայն թիւրիմացութեան հետեւանքով միայն ութ ամիս ետք Պուենոս Այրէսի վարչութեան ձեռքը անցած է: 17 Յուլիս 1918ին ըսուած է, թէ «նամակին մէջ կը յանձնարարէին որ Ազգ[ային] Միութեան կազմութեան համար պէտք եղած ջանք չի խնայուի»³⁰: 21 Յուլիսի ՀԲԸՄի Արժանիքի ընդհանուր ժողովը, լսելէ ետք Պարգեւեանի զեկուցումը Ազգային Միութեան անցուդարձերուն շուրջ, որոշած է, որ «մասնաժողովը երկրորդ անգամ ջանք ընէ իրական Ազգ[ային] Միութիւն մը կազմելու Ազգ[ային] Միութեան կանոնադրին համաձայն միայն կազմակերպութիւնները հրաւիրելու պայմանաւ»³¹:

Միւս կողմէ, Ֆրանսա շարունակած է իր փորձերը՝ կամաւորական շարժումը կազմակերպ հունի մէջ դնելու: Այսպէս, 25 Յուլիսին, Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպար գրած է Ֆրանսայի Արտաքին Գործոց նախարարութեան Ասիոյ բաժնի փոխտնօրէն Ժան Կուին, թէ ստացած է Պատերազմի նախարարի նամակին պատճէնը՝ «Արժանիքի մէջ հայկական զինուորագրումը կազմակերպելու պատեհութեան մասին», եւ թէ այդ օր իսկ գրած է «Պուենոս Այրէս, Հ. Պաղտասարեանին (իմա՝ Պարասաթեան — Վ.Մ.)՝ մեր համայնքի կրօնական պետը այս քաղաքին մէջ, ինչպէս եւ միւս անձնաւորութիւններուն, որոնց

անունները տուած է նախարարին գրութիւնը»³²: Այս նամակին արձագանգելով, Արտաքին Գործոց նախարար Ստեֆէն Փիշոն կը հաղորդէր Արժանթինի մօտ Ֆրանսայի դեսպան Կոսէնին, թէ Պօղոս Նուպար արդէն գրած էր հովիւին, ինչպէս եւ «տեղւոյդ երեւելի հայ առեւտրականներ Հմայեակ Յակոբեանին, Մեծատուր Մեծատուրեանին եւ Ջէյթունեանին, յանձնարարելու համար զինուորագրումի հայկական կոմիտէի մը ստեղծումը»: Միաժամանակ, Փիշոն դեսպանին կը դիմէր, որպէսզի արագացնէր խնդրին լուծումը³³:

Սակայն, նշելի է, որ արդէն կազմակերպուած էր կամաւորական վարչութիւն մը եւ Յ Յուլիսին յաջորդող օրերուն ուրիշ խումբ մը մեկնած, որուն մաս կը կազմէր օղաչու Միհրան Խայեան, որ 1919ին պիտի մահանար Կարսի մօտ՝ թուիչքի ընթացքին³⁴:

Ֆրանսական միջամտութիւնը՝ կամաւորական շարժումի գծով, գուզադիպած է ներգաղութային կարգաւորումի հարցին: Արդարեւ, ներքին վերլիպայրուամներուն իրազեկ, Պօղոս Նուպար դիմած էր դեսպան Կոսէնին այդ վիճակը լուծելու խնդրանքով: Առ այդ, հայթայթած էր անուանացանկ մը, որով գաղութի ղեկավար տարրեր կանչուած են դեսպանատուն: ՀՅԴ ղեկավար Յարութիւն Թահթաճեանի ղիմումին վրայ, Արսլան հանդիպումը կանխած է, տեսակցելով Կոսէնի հետ ու խոստանալով իր միջամտութեամբ լուծել հարցը³⁵: Այսպէս, Եկեղեցւոյ հին եւ նոր վարչութիւններու խնդիրը լուծելու համար 4 Օգոստոսին կայանալիք ժողովը յետաձգելէ ետք, ՀԲԸՄի վարչութիւնը իրազեկ եղած է Արսլանի եւ Երուանդ Խաչիկեանի ձեռնարկումին, եւ վճռած է չխոչընդոտել՝ կազմակերպութիւնները ժողովի ղկանչելով (7 Օգոստոս)³⁶: 14 Օգոստոսին, Արսլան տեղեկացուցած է, թէ եկեղեցական երկու վարչութիւնները Խաչիկեանը ընդունած են իրրեւ ներկայացուցիչ եւ թէ շուտով բոլոր կազմակերպութիւնները պիտի հրաւիրուին Հայ Ազգային Միութիւնը կազմելու³⁷:

Այդ քայլը կատարուած է 1 Սեպտեմբերին³⁸: Միութենէն դուրս մնացած է «Հաճրն» Ընկերութիւնը, որուն ներկայացուցիչը՝ Քեչեճեան, ստիպուել էր հրաժարիլ ատենապետի պաշտօնէն՝ Միութեան վերակազմութիւնը դիւրացնելու համար: Արդարեւ, Ամերիկայի Հայ Ազգային Միութեան կանոնադիրը, որուն կը հետեւէր նոր Միութիւնը, նկատի ունէր միայն յարանուանութիւններու, կուսակցութիւններու եւ ՀԲԸՄի ներկայութիւնը: Դիւանը ատենապետ եւ զանձապահ ըտրած է Խաչիկեանը, ատենադպիր՝ Մելքոն Էպէեանը (Հայ Աւետարանական Եկեղեցիէն), որ նոյն պաշտօնը ունեցած էր Քեչեճեանի օրով, առանց սակայն կազմակերպական ներկայացուցչութեան: Նոր միութեան պաշտօնական անունն էր Unio'n Nacional Armenia³⁹:

Միաժամանակ, կազմուած է Հայ Դատի հետապնդումին համար Փրոփակահատի Մարմին մը: Անոր անդամակցած են Արսլան, Թահթաճեան, Հայկ Մոսկոֆեան, Ճեմիլ Տիբուանեան եւ Պօղոս Յովակիմ: Մարմինը ենթակայ էր Ազգային Միութեան ու յաջորդ տարուան Ապրիլէն նիստերը գումարած է Միութեան դիւանին հետ միասին: Այս պատճառով, Ազգային Միութիւնը համայնքին մէջ յայտնի դարձաւ Խառն Ժողով անունով:

Համերաշխութեան գոյացումը այնուհետեւ հաղորդուած է Պօղոս Նուպարին.—

"Buenos-Ayres [sic], le 4 Novembre 1918

Son Excellence
Boghos Nubar Pacha
Président de la Délégation Nat[ional] Arménienne
Paris

Excellence,

Considérant que notre Patrie à été l'un des pays qui ont le plus souffert de cette guerre universelle, nous nous sommes imposé de devoir sacré de porter au soulagement de ses maux toutes [sic] nos forces morales et materielles.

Et comme de[s] dignes fils de notre malheureuse Patrie nous avons décidé de reunir toutes nos forces individuelles pour faire renaître des cendres de la Patrie une Arménie forte. Dans ce but nous avons formé des représentatns des diverses organisations nationales de notre ville une Union générale que nous l'avons denominée l'Union Nationale Arménienne de Buenos Aires [sic]. Nous avons adopté le Règlement de l'Union Nationale Arménienne de l'Amérique du Nord et conformément à ce règlement nous avons formé notre bureau, comme suit:

M.Y. Khatchikian ' Président Représentant de l'église arménienne orthodoxe

M. Ebéyan Secrétaire Représentant de l'église arménienne protestante

K. Solgarian⁴⁰ Conseiller Représentant du Partie Dachnagtzoutioun

M. Movsesian Représentant du Partie Hentchakian réformé

N. Khesolmounian⁴¹ Représentant du l'Union Générale de Bienfaisance

Pour mener bien l'œuvre de propagande nous avons nommé un Comité de propagande, composé des suivants: (10 personnes)⁴².

Les membres du Bureau de l'Union ainsi que du Comité de Propagande ont juré de sacrifier toutes leurs forces morales et matérielles à notre Patrie souffrante, dans l'espoir de voir bientôt réalisés nos douces rêves.

Veillez agréer, Excellence.....

Le Secrétaire

Ebéyan

Le Président

Khatchikian⁴³

Հետաքրքրական է, որ Ազգային Պատուիրակութիւնը, հակառակ Պուենոս Այրէսի հայոց պառակտեալ վիճակը բարւոքելու իր հետապնդումին, անմիջապէս արձագանգած չէ նամակին. նամակին պատասխանը գրուած է միայն երեք ամիս ետք.—

«Փարիզ. 15 Փետր[ուար] 1919

Ազնուաշուք

Տիար Ե. Խաչիկեան

Ատենապետ Հայ Ազգ[ային] Միութեան դիւանի

Պ[ոլեմոս] Այրէս»

Հեռաւոր գաղութիդ մէջ առաջ եկած ազգային շարժումը, որուն մասին կը տեղեկագրէք Նոյեմբ[եր] 4 թուակիր նամակով, մեծ գոհունակութիւն պատճառած է Ազգ[ային] Պատուիրակութեան:

Մեր ցեղին կրած վերջին աղետը այնքան մեծ ու սուկալի է, որ բոլոր տրամադրելի ուժերու միացումով միայն կարելի է ամենաանհրաժեշտ օժանդակութիւնը բերել եւ չարիքը դարմանելու համար մեր պարտականութիւնը կատարած ըլլալու դոյզն գիտակցութիւնը ունենալ: Այս տեսակէտով ձեր նամակը կազդուրիչ մխիթարութիւն մը պատճառած է Ազգ[ային] Պատուիրակութեան, որ կատարեալ յաջողութիւն կը մաղթ. Ձեր եւ Ձեր ազնիւ աշխատակիցներու ազգօգուտ ձեռնարկին:

Ի դիմաց Ազգ[ային] Պատուիրակութեան

Ընդհ[անուր] Զարտուղար

[Հայկ Պերպէրեան]⁴⁴

Այսպէսով կը հաստատուէր աշխարհական կազմակերպութիւն մը, որուն գլուխը կը գտնուէին ժամանակի կրօնական երկու գլխաւոր համայնքներու՝ առաքելական եւ աւետարանական, ներկայացուցիչները⁴⁵: Եկեղեցւոյ շուրջ համախմբուածի աւանդական կաղապարը մերժուած էր: Այս փորձը պիտի դիմանար տասնամեակ մը, մինչեւ 1928 թուականը, երբ տեղի կ'ունենայ Հայ Ազգային Միութեան յաջորդող Հայ Գաղու-

Թային Կեղերոնի բաժանումը՝ կաթողիկէ համայնքի անջատումով⁴⁸։

Կոսէնի միջամտութեան շնորհիւ, Հայ Ազգային Միութիւնը իրաւական վաւերացում ստացած է արժանութիւնեան կառավարութենէն⁴⁹։ Ասիկա կարելիութիւն տուած է որ Միութիւնը, որպէս միակ ներկայացուցիչ Պոլսէնոս Այրէսի գաղութին, ինքնութեան թուղթեր, անձնագիրեր ու այլ պաշտօնական թուղթեր շնորհէ, Փրանսական հիւպատոսարանի վաւերացումով⁴⁸։

1918–1920 բախտորոշ ժամանակաշրջանին, Հայ Ազգային Միութեան ուսերուն վրայ պիտի իյնար հայ դատի հետապնդումը եւ հայկական քարոզչութեան սատարումը⁴⁹։

Արդարեւ, 30 Հոկտեմբեր 1918ին կնքուած էր Մուտրոսի գինադարը, սակայն Արեւմտեան Հայաստանի ճակատագրի մասին որեւէ ակնարկութիւն չկար Դաշնակիցներու դրած պահանջներուն մէջ։ Որպէս հակազդեցութիւն, Արսլան խմբագրած է Փրանսերէն յայտարարութիւն մը, զոր Խաչիկեանի հետ միասին ներկայացուցած է Դաշնակից Պետութիւններուն (Ֆրանսա, Անգլիա, Միացեալ Նահանգներ, Իտալիա, Պեճիքա եւ Ճափոն), եւ հրատարակել տուած՝ Պոլսէնոս Այրէսի թերթերուն մէջ՝ սպաներէն, անգլերէն, Փրանսերէն եւ իտալերէն լեզուներով։

7 Նոյեմբերին, օրուան ամէնէն ազդեցիկ օրաթերթը՝ Լա Նասիոն, կը գրէր—

«Այս կոմիտէն Դաշնակից Պետութիւններու ներկայացուցիչներուն յանձնած է գրութիւն մը ուր կը յայտարարէ թէ այսուհետեւ Արժանթին հաստատուած ունէ Հայ պիտի չուզէ ուղղակի թէ անուղղակի յարաբերութիւն ունենալ թուրք կառավարութեան հետ։

... [այդ կառավարութիւնը] համակարգուած կերպով հարիւր հազարաւոր հայեր սպաննած ըլլալէ ետք՝ քաղաքական նպատակով, օգտուած է Եւրոպայի անբնական վիճակէն խաղաղ ամբողջ ցեղ մը բնաջնջելու, արհեստավարժ ոճրագործի պաղարիւնութեամբ, վստահ ըլլալով թէ պիտի չստիպուէր իր ոճրային արարքներուն հաշիւ տալ, ինչպէս անցեալին։

Բարեբախտաբար դաշնակից յաղթանակները միանգամընդմիջտ վերջ տուած են բռնատէրերու իշխանութեան, եւ մենք, աւելի վստահ քան երբեք, մեր ճակատագիրերը կը դնենք իրաւունքի եւ ազատութեան ախոյեաններու ձեռքը, սպասելով Պրն. Ուիլսոնի եւ Դաշնակից կառավարութիւններու յայտարարած սկզբունքներուն զործադրումը, ըստ որոնց մենք մեզ օրինականօրէն իրաւասու կը համարենք ամբողջ Հայաստանի (թուրք, ռուս եւ պարսիկ) անկախութիւնը պահանջելու՝ պատմական սահմաններով։

Հայ Ազգային Միութիւնը յիշեալ ներկայացուցիչներէն խնդրած է

գրութիւնը փոխանցել իրենց կառավարութիւններուն»⁶⁰:

Յ Նոյեմբերին, Կոսէն հեռագրած է արտաքին գործոց նախարար Ստեֆէն Փիլոնին.—

«Պուենոս Այրէսի Հայ Ազգային Միութիւնը, Արժանիքի իր բոլոր հայրենակիցներուն անունով, կը խնդրէ Ձերդ Գերագանցութեան փոխանցել այսպէս ամփոփուող յայտարարութիւններ.—

«Մենք չենք ուզեր այլեւս որեւէ ուղղակի թէ անուղղակի յարաբերութիւն ունենալ թուրք կառավարութեան հետ: մենք Դաշնակիցներու եւ յատկապէս Ֆրանսայի ձեռքը կը ձգենք մեր պահանջատիրութիւնը՝ ակնկալել ամբողջ թրքական, ռուսական եւ պարսկական Հայաստանին անկախութիւնը իր պատմական սահմաններով»⁶¹:

Ըստ յայտարարութեան բնագրին, ընդգծուած բառերը անկէ բացակայ են: Ասիկա ենթադրել կու տայ, որ Արսլանի եւ Կոսէնի համաձայնութեամբ, այս խօսքերը աւելցուած են՝ սիրաշահելու համար Ֆրանսան:

Կ'արժէ ընդգծել, որ ըստ Արսլանի, Ֆրանսական դեսպանատունը առաջին շրջանին լաւագոյն տրամադրութիւնները ցոյց տուած է գաղութին հանդէպ: «Նոյնիսկ Ֆրանսական դեսպանը խոստացած էր նախագահել տեղույս առաջնակարգ թատրոններէն միոյն մէջ մեր սարքելիք մէկ մեծ երեկոյթին, որուն իրենց ներկայութիւնը խոստացած էին դաշնակից պետութիւններու բոլոր ներկայացուցիչները Պ(ուենոս) Այրէսի մէջ: Ինչպէս նաեւ հայերու ի նպաստ ձեռնարկուելիք մեծ հանգանակութեան մը»⁶²:

Յ Նոյեմբերին, Փիլոն պատասխանած է, թէ «բարի եղէք շնորհակալութիւն յայտնել Պուենոս Այրէսի Հայ Ազգային Միութեան իր յայտարարութեան համար եւ վստահեցնել անոր, թէ Հանրապետութեան կառավարութիւնը վճռած է վերջ դնել այն վարչակարգին որուն գոհը եղած են հայերը»⁶³:

Արսլան, թարգմանաբար մէջբերելով յայտարարութիւնը, գայն թուագրած է Յ Նոյեմբեր: Ան պէտք է ըլլայ Վ Նոյեմբեր, որովհետեւ Կոսէնի հեռագրին թուականը կը հերքէ այս թուագրումը, ինչ որ կը հաստատէ Անգլիոյ դեսպան Ռեճինըլտ Թաուլըրի նոյն էջին վրայ մէջբերուած պատասխանը, որ գրուած է Յ Փետրուար 1919ին: Հոն կ'ակնարկուի Վ Նոյեմբեր թուակիր յայտարարութեան, եւ ի մասնաւորի, շնորհակալութեան ընթացիկ խօսքերէ ետք, կը նշուի.—

«Բաց աստի, ինձ պարտք կը գնեն Ձեզ յիշեցնելու որ իմ կառավարութիւնս միշտ զգայուն գտնուած է հայերու տառապանաց հանդէպ թուրք լուծի տակ եւ փափաքող եղած է օգնութեան հասնելու բոլոր օտար ժողովուրդներու որոնք կը գտնուին թուրք կայսրութեան մէջ:

Արդէն Մեծն Բրիտանիա համամիտ է հայերու անկախութեան եւ

միութեան ծրագրին: Միայն թէ, պարտիմ յաւելուլ որ, խաղաղութեան խորհրդաժողովը պիտի չկրնայ աննպաստ գտնուիլ չէզոք երկրի մը ամբողջութեանը, որպիսին է Պարսկաստան, ուր հայ ցեղի բնակիչք արդէն քիչ թիւ կը կազմեն եւ միշտ լաւ վարմունք տեսած են»⁵⁴:

Տակաւին «ծովէ ծով Հայաստան»ի ժամանակաշրջանն էր, որուն բոլոր մեծ պետութիւնները պիտի հակադրուէին: Հետաքրքրական է տեսնել անգլիացի ներկայացուցիչին վերահաստատումը՝ հայոց հանդէպ իր կառավարութեան թուացեալ համակրանքին, ինչպէս եւ հայերու «միշտ լաւ վարմունք» տեսած ըլլալը Պարսկաստանի մէջ, ինչ որ, առնուազն Արեւելեան Հայաստանի պարսկական տիրապետութեան շրջանին, այդքան ալ ճիշդ չէր:

Ֆրանսական փութկոտութիւնը՝ յայտարարութեան արձագանգելու, կը հակադրուէր անգլիական դանդաղութեան: Ասիկա մաս կը կազմէր Փարիզի քաղաքականութեան՝ հայերը սիրաշահելու, միջինարեւելեան իր դիրքերը զօրացնելու համար: Պատահական չէ, որ 16 Յունուար 1919ին Սաչիկեանի ստորագրութեամբ համանման հեռագիրներ ղրկուած ըլլան Քլեմանսոյին եւ Ուիլսոնին, բայց ո՛չ՝ Լոյս Ճորճին: Քլեմանսոյի հեռագիրը կ'ըսէր՝

«Հարաւային Ամերիկայի հայերը ձեզմէ կը խնդրեն խաղաղութեան խորհրդաժողովին զօրավիգ կանգնիլ մեր պատուիրակութեան, պատմական սահմաններու մէջ մեր բացարձակ անկախութիւնը վերականգնելու համար: Կը վստահինք ձեր աջակցութեան որպէսզի համայն աշխարհի հայերը իդձերու լիակատար գոհացում ունենան»⁵⁵:

Միաժամանակ, Միութիւնը ձեռնարկած է կամաւորական շարժումի վերջնական կազմակերպութեան: Կամաւորները մեկնած են Ազգային Միութեան վկայագիրով, Ֆրանսական հիւպատոսարանին մէջ բժշկական քննութեան ենթարկուելէ ետք, եւ Ֆրանսայի կառավարութեան ծախքով⁵⁶: Տարբերութիւններ կան, սակայն, մեկնողներու թիւին մէջ. ըստ Թոփչեանի, չորս ամսուան միջոցին, երեք խումբեր մեկնած են (Դեկտեմբեր 1918, Փետրուար եւ Ապրիլ 1919), ընդհանուրը՝ 120 հոգի: Առաջին խումբը գլխաւորած է Արսլանի եղբայրը՝ Բժ. Արշակ Արսլանեանը⁵⁷: Սակայն ըստ Արսլանի, տարբեր թուականներով հինգ խումբեր մեկնած են, 115 հոգիով⁵⁸: Իսկ ըստ Արծրունիի, մեկնողներուն թիւը եղած է 150⁵⁹:

16 Յունուար 1919ին, Սաչիկեանի ստորագրութեամբ հետեւեալ հեռագիրը ղրկուած է Պօղոս Նուպարին. — «Հարաւային Ամերիկայի հայերը Ձերդ Գերագանցութեան կը վստահին մեր ազգին ներկայացուցչութիւնը խաղաղութեան խորհրդաժողովին, խնդրելով ձեռք ձգել Հայաստանի ամբողջական անկախութիւնը, իր պատմական բոլոր սահմաններով»⁶⁰:

Յարարերական աշխատանքներուն կողքին (Դաշնակից Պետութիւններուն ուղղուած շնորհաւորագիրեր, դիմումնագիրեր, հեռագիրեր, եւ այլն) Հայ Ազգային Միութիւնը պարբերաբար կազմակերպած է հանրաժողովներ՝ ան կազմակերպած է նաեւ թերթերու մէջ հայանպաստ յօդուածներու հրատարակութիւնը: Փրանսական դեսպանատան հետ գործակցութիւնը բաւական ատեն շարունակուած է, կը վկայէ Արսլանը, սակայն յետագային տեղի ունեցած է խզում մը:—

«Օր մը, Փրանս[այի] դեսպանը զիս կանչելով մասնաւոր կերպով յանձնարարեց որ գաղութիս բոլոր անդամները իրենց քուէն Պօղոս Նուպարին տան, երբ կարգը գայ Հայաստանի նախագահի ընտրութեան: Ասիկա կ'երեւար թէ Փարիզէն ստացած մէկ հրահանգին հետեւանքն էր:—

(...) Սակայն, պատահեցաւ որ պարագաները բոլորովին տարբեր արդիւնք ցոյց տուին, երբ Ազգերու Լիկայի կողմանէ եղած առաջարկի մը ընդառայ երթալով, հայերը նախընտրեցին Հիւս[իսային] Ամերիկայի Խնամատարութեան ենթարկուիլ:

Ասիկա անակնկալ հարուած մը եղաւ Փրանսական քաղաքականութեան եւ անմիջական ազդեցութիւնը զգացինք հոս մենք եւս: Երբ օր մը Փրանսական դեսպանին դիմելով մեր պատրաստելիք միթիւնկի եւ հանգանակութեան մասին իր վերջնական խորհուրդը հարցուցի, տեսայ որ պարագաները բոլորովին փոխուած էին, քանի որ դեսպանը շատ պաղ կերպով ինձ ըսաւ որ «այսուհետեւ պէտք է դիմէք Հիւս[իսային] Ամերիկայի դեսպանատուն, քանի որ անիկա պիտի գրադուի հայերուն վերաբերեալ խնդիրներով»⁶¹: Յամենայնդէպս, պահանջուած է կապը՝ վկայագիրերու վաւերացումին համար:

Հայ Ազգային Միութեան ուրիշ կարեւոր գործունէութիւն մը եղաւ Հայ Դատի ինպաստ հանգանակութիւնը, որուն ծրագրումը սկսած է Դեկտեմբեր 1918ին⁶²: Որպէս արդիւնք, Յունիս 1919ին եւ Մարտ 1920ին ղրկուած է քսանհազար Փրանք Ազգային Պատուիրակութեան⁶³:

Նշուած է նաեւ Հայաստանի անկախութեան առաջին տարեդարձը, 28 Մայիս 1919ին, 1200 հոգիի ներկայութեամբ⁶⁴ (գաղութի գրեթէ ամբողջութիւնը):

Միութիւնը ներկայացած էր որպէս Միացեալ Նահանգներու Հայ Ազգային Միութեան մասնաճիւղ, զայն հզօրացնելու համար ամերիկեան հանրային կարծիքին աչքին, եւ առաջնորդուած էր անոր կանոնադրով: Այդ կազմակերպութիւնը կը համախմբէր ամերիկահայ բոլոր միութիւնները, բայց 1919 թուականի կէսերուն ներքին վէճեր ծագած են, որոնք յաջորդ տարին յանգած են ՀՅԴի անջատումին: Վերջինիս հայեցակէտով, հակառակ անոր որ ինք ամերիկահայ մեծագոյն կազմակերպութիւնն էր, Հայ Ազգային Միութեան մէջ փոքրամասնութիւն դարձած

էր, քանի որ մէկ քուէի իրաւունք ունէր, որեւէ այլ կազմակերպութեան նման⁶⁵։

Այս դէպքին արձագանգը հասած է հարաւ. 10 Մարտ 1920ի նամակով, Պուենոս Այրէսի ՀՅԴ մարմինը կը հաղորդէր, որ այնուհետեւ մաս պիտի չկազմէր Հայ Ազգային Միութեան, պատճառաբանելով վերջինիս կապը Միացեալ Նահանգներու Հայ Ազգային Միութեան հետ⁶⁶։ Հաւանաբար ՀՅԴն չէր ուզեր անդամակցիլ մարմինի մը, որ ենթակայ էր ուրիշի մը, որմէ անջատուած էր եւ որուն մրցակիցն էր։

Ժամանակաշրջանին վերաբերող յուշագրութիւններու համադրումը ցոյց կու տայ, որ ըստ էութեան մրցակցութիւն մը սկսած էր Հայ Ազգային Միութեան եւ կուսակցութիւններուն միջեւ։ Առաջինին «աղայական» վերաբերումին հետեւանքով, նախ ՄԴՀԿը եւ ապա ՀՅԴն քաշուած են անոր կազմէն. Փետրուար 1920ին կազմուած է Միջկուսակցական Մարմին մը, ՀՅԴի երկու (Մանուկ Մութաֆեան եւ Յարութիւն Թահթաճեան՝ ատենապետ) եւ ՄԴՀԿի մէկ ներկայացուցիչով (Ստեփան Շիրազումեան), որ այսպէս կոչուած «ունեւորներու հատուած»ին առնթեր զբաղած է Հայաստանի Հանրապետութեան ի նպաստ օգնութեամբ⁶⁷։

Հայաստանի անկախութեան երկրորդ տարեդարձը աւելի լայն տարողութիւն կը ստանար։ Արդարեւ, կանխող օրերուն՝ 3 Մայիսին, նախագահ Իփոլիթօ Իրիկոթէնի եւ Արտաքին Գործոց նախարար Օնորիօ Փուէյրետոնի ստորագրած հրամանագրով, Արժանթին ճանչցած էր Հայաստանի անկախութիւնը, ինչպէս կը նշուէր՝ «Հայաստանի ժամանակաւոր կառավարութեան ներկայացուցիչի ղեմումին վրայ»⁶⁸։ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչը Ռիօ տը ժանէյրոյի մէջ՝ Տոքթ. Էթիէն Պրազիլ, Ապրիլին ղեմած էր Արժանթինին՝ Պրազիլի մօտ դեսպան Մարիօ Ռուիս տէ լոս Փանոսի միջոցաւ⁶⁹։

Ի պատասխան ասոր, 12 Մայիսին, Հայ Ազգային Միութեան ընդհանուր ժողովը որոշած է Արժանթինի նախագահին յղել հետեւեալ նամակը, Սաչիկեանի եւ Արսլանի ստորագրութեամբ. —

«Պուենոս Այրէսի Հայ Ազգային Միութիւնը, գումարուած՝ ընդհանուր ժողովի մէջ, որոշեց միաձայնութեամբ իր ամենաբարձրագոյն պատիւը ընծայել Արժանթինի կառավարութեան, որպէս երախտագիտութեան վկայութիւն անոր ազնիւ եւ վեհանձն որոշումին՝ Հայաստանի Հանրապետութիւնը ճանչնալու որպէս ազատ եւ անկախ պետութիւն։

Արժանթինեան կառավարութիւնը, առաջին պետութիւններէն ըլլալով որ ճանչցած է Հայաստանի անկախութիւնը, արժանացած է յաւերժ երախտագիտութեան, ո՛չ միայն այս հիւրընկալ երկրին նպաստները ստացողներուս, այլեւ ողջ հայոց ազգին, որուն զգացումները կը մեկնաբանենք, եւ որ ազատութեան իր տենչանքներուն համար գտաւ արժանթին-

ցիին նման վեհանձն ժողովուրդի մը զօրակցութիւնը՝ աշխարհի ազատ ժողովուրդներու շարքին մաս կազմելու համար:

Եղէք, Ձերդ Գերագանցութիւն, ընդունողը հայոց զգացումներու այս անկեղծ յայտարարութեան՝ արժանթիւնեան կառավարութեան եւ ժողովուրդի նկատմամբ, զոր անոնք աշխարհի ազատ ժողովուրդներէն մէկը կը կոչեն՝ իր ազգային փառերգի բառերով»⁷⁰:

Այս միջնորդութիւն մէջ գաղութը դիմաւորած է երկրորդ տարեդարձը: Ըստ Արսլանի՝ «1920 Մայիս 28ին Հայկական Հանրապետութեան երկրորդ տարեդարձը տօնելու համար Միութիւնը հանդէս մը կազմակերպեց Բարնա փողոց 555ի սրահին մէջ (...)»⁷¹: Այս խօսքէն կը մակարեւրուի, որ ձեռնարկը տեղի ունեցած է նոյն 28 Մայիսին՝ այդպէս հասկցած են Արծրունի (որ զրեթէ բառացի կը կրկնէ Արսլանի խօսքերը), Պինայեան եւ Հասասեան⁷²:

Սակայն, Լա Ռասոն օրաթերթը 2 Յունիսին կը զրէր, թէ «նշելու համար Հայաստանի Հանրապետութեան տարեդարձը, անոր Ազգային Միութիւնը, որ կեդրոն ունի մեր երկրին մէջ, վաղը զիշեր տօնահանդէս մը պիտի սարքէ «Լա Քոլոնիա Իթալիանա» սրահին մէջ»⁷³: Ձեռնարկը, ուրեմն, տեղի ունեցած է 3 Յունիսին: Հանգանակութենէն զոչացած է 8095 փեսօ (չուրջ 29000 Ֆրանք, մեր հաշուարկով), որմէ 4500 փեսօ դրկուած է Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան: «Սոյն գումարը թիւրիմացութեան մը հետեւանքով իր հասցէին չկրնալով յանձնուիլ, ետ վերադարձուեցաւ եւ վերոյիշեալ հանգանակութենէն մնացեալ գումարով դրկուեցաւ Երեւան, հայկական բանակին յատկացուելու համար»⁷⁴:

25 Ապրիլին, ՄԴՀԿը դիմում կը կատարէր ՀՅԴին, միասնաբար տօնելու անկախութեան Բ. տարեդարձը⁷⁵: Միացեալ տօնակատարութիւնը եղած է 3 Յունիսի ձեռնարկը՝ արդարեւ, օր մը ետք, երկու կուսակցութիւններու անուկով հեռագիր մը դրկուած է էթիէն Պրագիլին: «Մեր նախաձեռնութեամբ հանդէսի մէջ հաւաքուած հայեր տօնեցին իրենց անկախութեան տարեդարձը: Ձերմ շնորհաւորութիւններ կը յղեն ձեզի: Մօտաւորապէս 30000 Ֆրանք հաւաքեցին»⁷⁶: Հայ Ազգային Միութեան եւ երկու կուսակցութիւններու միասնական յիշատակումը կը ցուցնէ, որ կարելի եղած էր առժամարար հարթել տարակարծութիւնները եւ միասնական ուժ ցոյց տալ: Պէտք է նկատի ունենալ, որ կուսակցութիւնները, հակառակ իրենց սակաւ անդամներուն⁷⁷, գաղութային գործերու մէջ գլխաւոր կշիռը կը շարունակէին պահել:

29 Յունիսին, ՀՅԴ տոմարը արձանագրած է, թէ սկսած է միջկուսակցական հանգանակութիւն՝ Կիլիկիոյ պաշտպանութեան, իսկ Յուլիսին՝ Հայաստանի բանակին ի նպաստ⁷⁸: Արդարեւ, 16 Յուլիսին, ստեղծուած է Հայաստանի Բանակին Օգնող Յանձնախումբ (ատենապետ՝

Ստեփան Եխրրարմեան — ՍԴՀԿ, ատենադպիր՝ Բարսեղ Էօրէճեան — ՀՅԴ, գանձապահ՝ Միսաք Փննիկեան — ՀՅԴ)⁷⁹: Այդ յանձնախումբը հանրաժողով մը կազմակերպած է Պուսթամանթէ փողոց թիւ 500ի սրահի մը մէջ, հաւաքած 7000 փեսօ (25160 Ֆրանք) եւ գումարը ուղարկած Աւետիս Ահարոնեանին⁸⁰:

Պառակտումը կանխելու նպատակով, 4 Յուլիսին տեղի ունեցած ժողով մը վճռած է Հայ Ազգային Միութիւնը անկախ հռչակել, զայն անուանելով «Հայ Ազգային Միութիւն Արժանթինի», սեփական կառուցցով եւ ծրագիր-կանոնագիրով: Անոր նպատակներէն էր «... Արժանթինի մէջ զազուցիս անդամներու նիւթական եւ բարոյական պիտոյից հոգածու ըլլալ, կազմակերպելով տեղական օժանդակիչ ժողովներ, լսարան, դպրոց, եկեղեցի, հիւանդանոց, եւլն»⁸¹: Թէեւ «կազմակերպել» բառը կը թուի յուշել, որ Հայաստանեայց Եկեղեցին անհետացած էր, սակայն ան գոյ էր: Արդարեւ, 18 Յուլիսի ընդհանուր ժողովի դիւանը կազմուած է յարանուանութիւններու՝ առաքելական եւ աւետարանական, կուսակցութիւններու՝ ՀՅԴ, ՍԴՀԿ եւ ՎՀԿ⁸² ու ՀԲԼՄի ներկայացուցիչներով: Ժողովը վաւերացուցած է նոր ծրագիրը եւ որոշած՝ դիւանին մէջ երկու չէզոք անդամներ ներառել:

Այս փորձը վիժած ծնունդ մը պիտի հանդիսանար: 12 Սեպտեմբերին, ՀՅԴի կոմիտէի նիստը արձանագրած է հետեւեալը.— «Ազգային Միութեան խնդրոյ շուրջ Կոմիտէիս որոշումը եղաւ մեր ներկայացուցչի միջոցով առաջարկել, որ ժողովուրդի քուէներով ընտրուին վարչութեան հինգ անդամները եւ մէկական ներկայացուցիչ ալ ունենան քաղաքական երեք կուսակցութիւնները՝ Հնչակեան, Ռամկավար եւ Դաշնակցական: Նորակազմ վարչութիւնը առժամեայ կը վարէ զազուցի արտաքին եւ ներքին գործերը՝ մինչեւ Հայաստանի Հանրապետական կառավարութեան ներկայացուցչի ժամանումը: Անոր գալէն ետք, կուսակցութիւնները յետս կը կոչեն իրենց ներկայացուցիչները եւ վարչութեան մնացեալ հինգ անդամները կը վարեն զազուցի ներքին գործերը»⁸³:

Այս գաղափարը անհետեւանք մնացած է, իսկ 17 Հոկտեմբերի գաղութային ընդհանուր հաւաքոյթին կարդացուած է Հայ Ազգային Միութեան գործունէութեան տեղեկագիրը, նոր ծրագիրը եւ հաշուետուութիւնը: Նաեւ տեղեկութիւն տրուած է, թէ ՀՅԴն ու ՍԴՀԿը որոշած էին չանդամակցիլ: Անգործութեան մատնուելով, Արժանթինի Հայ Ազգային Միութիւնը այնուհետեւ անուանական գոյութիւն պահած է՝ ատենապետով (Խաչիկեան) եւ ատենադպիրով (Արսլան՝ 1919 Ապրիլին)⁸⁴, համայնքի անդամներուն զանազան փաստաթուղթերու հայթայթումը եւ ստորագրութիւնը դիւրացնելու համար:

Բաժանումի փաստը կարելի է համարել այն, որ այս շրջանին

Հանրապետութեան ներկայացուցիչ էթիէն Պրազիլ տասական հայկական անձնագիրը դրկած է Խաչիկեանին եւ Թահթաճեանին, սակայն անոնք շրջանառութեան մէջ չեն դրուած⁸⁸։ Ինչպէս կը յիշուի, Խաչիկեան Հայ Ազգային Միութեան ատենապետն էր, իսկ Թահթաճեան՝ Միջկուսակցական Մարմինին։

1920ի դէպքերուն մեր աղբիւրները դեռ անբաւարար են, եւ կուսակցութիւններու յանկարծական հրաժարումին պատճառը անյայտ կը մնայ։ Ոչ ալ գիտենք, եթէ նախօրօք համաձայնած էին նման քայլ մը առնելու։ Նարսիսօ Պինայեան կ'ըսէ, թէ ամերիկահայ գաղութի գերակայութեան յաւակնութիւնները պատճառ եղած են ՀՅԴի հեռացումին⁸⁹, մինչ ուղղակի առնչակից Իսրայէլ Արսլան լուրթիւն կը պահէ։ Մեր կարծիքով, երկու կողմերը չէին կրցած հարթել իրենց մօտեցումի տարբերութիւնները, ինչ որ բացայայտուած էր 1918ին կուսակցութիւնները հաւանաբար դժգոհ էին անկուսակցական գերակշիռէն եւ կը նախընտրէին քաղաքական գետնի վրայ անջատարար գործել։ Կրնայ ըլլալ, որ անոնց վերստին անդամակցութիւնը ձեւական ընդլիճ կրէր։

3 Յունիս 1923ին, ՀՅԴն կ'արձանագրէր, թէ «Ազգային Միութիւնը կորսնցուցած է իր մեծամասնութիւնը եւ երկու տարիէ ի վեր երկու անձեր՝ Երուանդ Խաչիկեան եւ Արծրունի (Իսրայէլ Արսլանեան — Արսլան) ուզածնին պէս կը վարեն գործերը։ Ուրեմն պահանջել, որ միւս անդամները հրաւիրելով ամբողջացնեն կազմը եւ հաշուետուութիւն ներկայացնեն։ Այդ իմաստով նամակներ գրել Պրն. Պր. Խաչիկեանին եւ Արծրունիին»⁹⁰։ Դեկտեմբեր 1923ին Հայ Ազգային Միութեան գումարուող ժողովին առիթով որպէս ատենապետ կը յիշուի նորեկ գաղթական Սոկրատ Յ. Թերզեանը (ՀՅԴ)⁹¹։ Յամենայնդէպս, Խաչիկեան պահած է Միութեան պատուոյ ատենապետի կոչումը մինչեւ իր մահը 1933ին⁹²։

Հայաստանի Հանրապետութեան անկումը, Կիլիկիոյ պարպումը, Իզմիրի աղէտը եւ Լոզանի դաշնագրի ստորագրութիւնը այս վճռորոշ շրջանին ամբողջովին քարուքանդ կ'ընէին անկախ երկրի կամ ազգային օճախի երազը եւ արեւմտահայութիւնը կը ստիպէին վերջնական սիւռումի։ Գաղթը պիտի ըլլար համատարած, իսկ Արժանիները պիտի դառնար կարեւոր հասցէներէն մէկը գաղթականութեան։ 1922ին Պուենոս Այրէսի հայ գաղութը պիտի թեւակոխէր իր կազմակերպական կեանքի մէկ նոր էջը՝ Հայ Գաղութային Կեդրոնի ստեղծումով։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Համառոտ քննարկումի մը համար, տես՝ Վարդան Մատթեոսեան, «Հայ[աստանեայց] Եկեղեցիին ծագումն ու զարգացումը Պունոս Այրեսի մէջ (1912-1938)», *Հասկ Հայագիտական Տարեգիրք* նոր շրջան, Անթիլիաս, Է.-Ը. տարի, 1995-1996, էջ 87-109:
2. Այստեղտես՝ ՀԲԸՄ:
3. *Տեղը Արշակունցի Գրական Հայ Բարեկործական Ընկերութեան Արժեքներն Հայոց* [ՀԲԸՄ], 7 Նոյեմբեր 1917, էջ 167-168: Հակառակ որոշ պնդումներու (Nélida Boulgourdjian, "Los armenios en Buenos Aires. Primera oleada migratoria [1909-1930]", *Todo es Historia*, Buenos Aires, agosto de 1992, էջ 81), գրութեան բովանդակութիւնը ցոյց կու տայ, որ զաղափարը Նոյեմբերէն առաջ կար:
4. Այստեղտես՝ ՀՅԳ:
5. Այստեղտես՝ ՄԳՀԿ:
6. Տես՝ «Պ. Այրեսի հայկական զարուիքը եւ Հ.Յ. Դաշնակցութիւնը (Ձ.)» յօդուածաշարքը, *Արմենիա*, Պունոս Այրես, 28 Յունուար 1970, էջ 1: Այս անտորագիր յօդուածաշարքը - լոյս տեսած 23 Յունուար-6 Փետրուար 1970 շրջանին - ըստ ամենայնի կը պատկանի քերթի խմբագիր Աշոտ Արծրունիին, որ կուսակցութեան տեղական մարմնի տոմարներէն քաղած է զամազան բնոյթի տուեալներ, երբեմն՝ բառացի մէջբերումներ: «Երեք հոսանքներ» խօսքով նկատի ունի, անտարակոյս, ՄԳՀԿը, ՀՅԳն եւ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը:
7. *Տեղը*, էջ 179:
8. Եկեղեցին կուսխանոր դարձած էր իրարամերձ՝ ՀՅԳ եւ ոչ-ՀՅԳ վարչութիւններու:
9. Տես՝ Ս. Թովչեան «Ընկ[եր] Յարութիւն Թաիքանեանի կեանքն ու գործունէութիւնը (Ձ.)», *Արմենիա* (շաբաթաթերթ, ապա երկօրեայ, հուսկ՝ օրաթերթ), Պունոս Այրես, 9 Յունիս 1934, էջ 2: Թովչեանի այս նիւթը յօդուածաշարք մըն է, որ լոյս տեսած է *Արմենիացի* մէջ 5 Մայիս 1934էն մինչեւ 24 Յունիս 1934:
10. Ի[սրայէլ] Ա[րսլան], «Թէ ինչպէ՞ս ծնունդ առաւ Հ[այ] Ա[րարեակական] Եկեղեցոյ] Հոգաբարձութիւնը», *Հայ Կեդրոն* ամսագիր, Պունոս Այրես, Փետրուար 1942, էջ 28: Արսլանի այս նիւթը յօդուածաշարք մըն է, որ լոյս տեսած է *Հայ Կեդրոն* մէջ, Յունուար 1942էն մինչեւ Նոյեմբեր 1942: Ժամանակի դէպքերուն մասին վաւերաթողութիւն սակաւութիւնը յաւելեալ պատճառ մըն է, որ Արսլանի յուշագրութիւնը փաստական անգնահատելի արժէք ձեռք բերէ:
11. *Տեղը*, էջ 180:
12. Ազգային Միութեան չմասնակցած հատուածները աւելի ուշ անդամակցած են անոր:
13. Kim Hekimian, "Armenian Immigration to Argentina, 1909-1938", *Armenian Review*, Boston, Spring 1990, էջ 99:
14. *Տեղը*, էջ 182:
15. *Հայկական Բարեկործական Ընդհանուր Միութեան նամակներու փոմար*, Պունոս Այրեսի մասնաճիւղ, նամակ թիւ 315: Տես նաեւ՝ *Տեղը*, էջ 184 (15 Մայիսի ատենագրութիւնը):
16. *Տեղը*, էջ 185:
17. Թովչեան, 2 Յունիս 1934, էջ 1:
18. Ըստ երեւոյթին, 1913-16ին Եկեղեցոյ Վարչութիւնը գտնուած է ՀՅԳ-ի անմիջական հակակշիռին տակ, սկիզբը՝ շարքայիններու, ապա՝ համակիրներու միջոցով: Այդ շրջանին է, որ ամերիկեան դեսպանը ճանչցած է զայն որպէս ազգային իշխանութիւն. - «Այս թուականէն սկսած սոյն վարչութեան տուած անցագրերով, հայերը առանց առարկութեան կ'ընդունէին [Ամերիկայի] Ս[իացեալ] Ն[ահանգներ]էն եւ Գանատայէն ներս» (Թովչեան, 19 Մայիս 1934, էջ 2): Այդ գործակցութիւնը թուա-

- գրած է 1918ի վերջերը (Աշուտ Արծրունի, *Տարեցոյց Հարկաւային/ Ամերիկահայոց*, Պուենոս Այրես, 1943, էջ 16: Ինչ որ վիճելի կը թուի: Արդարեւ, կուսակցութեան տոմարը կը նշէ գործակցութիւնը, բայց թուական տրուած չէ հրապարակուած քաղուածքին մէջ (Տես՝ Արծրունի, 30 Յունուար 1970, էջ 1):
19. Narciso Binayan Carmona, *Entre el pasado y el futuro: los armenios en la Argentina*, Buenos Aires, 1996, էջ 91:
 20. 10 Յունուար 1917ին, Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութենէն պատերազմի նախարար Լիոթէյի յղուած նամակ մը կը յայտնէր, թէ «մինչեւ հիմա Ռաշինկըրնի, Ռիօ տէ Ժանէյրոյի, Մոնթեիտոյի, Պուենոս Այրեսի, Բարաքասի եւ Փեթրոկրատի մեր դեսպանները, իմ կողմէն Դեկտեմբերի կէտերուն տեղեկացած ըլլալով «Արեւելքի Լեզտն»ի ստեղծումէն, դեռ չեն կարողացած տեղեկութիւններ տալ ինձի իրենց բնակութեան երկիրներու հայերու եւ սուրիացիներու զինուորագրումի հարցին շուրջ», տես՝ Arthur Beylerian, *Les Grandes Puissances, l'Empire Ottoman et les Arméniens dans le archives françaises (1914-1918)*, Paris, 1983, էջ 308:
 21. 1917ին Պուենոս Այրեսէն Սուրիա մեկնող կամաւորներուն միացած են Մոնթեիտոյէն եօթ հոգի, որոնց անուններն ալ կան (*Տարեցոյց*, էջ 265), սակայն արժանօթնահայ գաղութի բաժնին մէջ Արծրունի այդ թուականին համար ոչինչ կը նշէ:
 22. Beylerian, էջ 628:
 23. *Տկրք*, էջ 185:
 24. *Նոյն*, էջ 186:
 25. "Voluntarios armenios para la guerra", *El Diario*, Buenos Aires, 6 de junio de 1918. հմմտ.՝ "La prensa argentina y la independencia de Armenia", *Armenia*, Buenos Aires, 24 de mayo de 1983, էջ 6:
 26. Այսուհետեւ՝ ՎՀԿ:
 27. *Տկրք*, էջ 189–190:
 28. *Նոյն*, էջ 190:
 29. Արսլան, էջ 15: Տես օրինակ, "Comisión de Socorros para los Armenios", *La Prensa*, Buenos Aires, 4 de octubre de 1915; "Los armenios en nuestro pais. Comisión de Socorros", *idem*, 11 de octubre de 1915.
[Ինքայել Արսլան (1879–1952) վերաշխուժացումի եւ բեղուն աշխատանքի շրջանի հիմնական դերակատարներէն մէկը պիտի ըլլար: Փոքր Ասիա ազգային-կրթական գործունէութիւն տանելէ եւ Փարիզ ճարտարապետութիւն ուսանելէ ետք, 23 Գեկտեմբեր 1909ին Արսլան ժամանած է Պուենոս Այրես, ուր գրեթէ ինն տարի լծուած է իր ասպարեզին, առանց կապ ունենալու ծնունդ առնող հայ գաղութին հետ: Ան քացատրած է, որ բնակութիւն հաստատած ըլլալով քաղաքին կեդրոնը, «առիթ չէի ունեցած տեղեկանալու թէ քաղաքիս հեռաւոր քաղերուն մէջ հայեր կը գտնուէին»: Սակայն, պատճառաբանութիւնը լիովին համոզիչ չէ, քանի որ մինչ այդ քաղաքի գլխաւոր թերթերը տարբեր առիթներով արձագանգած են հայերու ներկայութեան եւ իրենց կազմակերպական գոյութեան, յատկապէս՝ 1915ի օրերուն]: Արսլանի կենսագրութեան համար, տես՝ Վարդան Մատթէոսեան, «Պուենոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի շինութիւնը», *Յանաջ*, Փարիզ, 18 Նոյեմբեր 1997:
 30. *Տկրք*, էջ 194:
 31. *Նոյն*, էջ 196:
 32. Beylerian, էջ 647:
 33. *Նոյն*, էջ 649:
 34. Տես՝ *Տկրք*, էջ 192: Խայեանի մասին տես՝ Յ.Յ. Պողոսեան, *Հանրնի Ընդհանուր Պարմութիւնը եւ շրջակայ Գոգան–Տաղի հայ գիւղերը*, Լոս Անճելոս, 1942, էջ 831–

- 832 եւ Carlos Hassasian, "Los primeros años del Tashnagsutiun en Sudamérica", *Արևի-
նիս*, Պուենոս Այրես, բացառիկ թիւ, Նոյեմբեր 1920, էջ 12: Թխրիմացաբար, Թոփ-
չեան (9 Յունիս 1934, էջ 2) Խայեանի մեկնումը կը թուագրէ 1916ին, իրեն հետեւած
է Պինայեան (Binayan, էջ 91):
35. Արսլան, Փետրուար 1942, էջ 28, հմմտ.՝ Թոփչեան, 16 Յունիս 1934, էջ 2:
36. *Տկար*, էջ 197–198: Տես նաեւ՝ Արսլան, Փետրուար 1942, էջ 29:
37. *Տկար*, էջ 199:
38. Ապրիլի թուագրումը (Թոփչեան, 24 Յունիս 1934, էջ 2) սխալ է, ըստ երեւոյթին շփոթ-
ւած է նախորդ Ազգային Միութեան հիմնադրութեան հետ:
39. Արսլան, էջ 29–30: Խաչիկեան նոյնպէս կնքապահն էր (Թոփչեան, 24 Յունիս 1934,
էջ 2): 21 Օգոստոսին, ՀԲԸՄի վարչութիւնը որոշած էր, թէ «եթէ Ազգային Միութեան
կազմին մէջ ռեւէ կազմակերպութիւն պակաս ըլլայ, կրկին առաջուան պէս Բարեգոր-
ծականը չէզոք պիտի մնայ ընկերութեան մէջ անհամաձայնութեանց ու կոխներու
տեղի շտապու համար, եւ մինչեւ որ ամենքն ալ ներկայ չի գտնուին, մեր ներկայացու-
ցիչը ներկայ չի պիտի գտնուի» (*Տկար*, էջ 201):
40. 12 Փետրուար 1919ին, ՀՅԴի ներկայացուցիչ դարձած է Մանուկ Մութաֆեանը, տես՝
«Պ. Այրեսի», էջ 1:
41. Պետր է ըլլայ Khoulmounian: Նազարէթ Խուլմունեան հիմնադիրներէն եղած է ՄԳՀԿի
Ուրուկուայի մասնաճիւղին, ուր «1918ին ներկայացուցիչն էր Հայաստանի Հանրա-
պետութեան» (Արսէն Կիսուր, *Պատմութիւն Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան (1887–
1963)*, Բ. հատոր, Պէյրութ, 1963, էջ 249):
42. Ինչպէս տեսանք՝ հինգ, հմմտ.՝ Թոփչեան, 16 Յունիս 1934, էջ 2: Տես նաեւ՝ Արսլան,
Փետրուար 1942, էջ 30:
43. Հայաստանի Հանրապետութեան Պատմութեան Պետական Կենտրոնական Արխիւ,
ֆ. 430, ց. I, գ. 646:
44. *Նոյն*, ֆ. 430, ց. I, գ. 646:
45. Binayan, էջ 94:
46. Տես Մատթեոսեան, «Պատակտումը եւ Եկեղեցոյ կազմակերպութիւնը» բաժինը: Ասի-
կա չի նշանակեր, որ Հայ Ազգային Միութիւնը փաստական գոյութիւն ունեցած ըլլայ
մինչեւ այդ տարին (հմմտ.՝ Hassasian, էջ 12), բացառելով՝ նորեկ հայերու ինքնութեան
թուրքերուն վաւերացումը:
47. Ըստ Արծրունիի, Հայ Ազգային Միութիւնը «դիմում կը կատարէ արխիւնքիւնեան կա-
ռավարութեան՝ պաշտօնապէս վաւերացնելու համար ստեղծուած այդ միութիւնը:
Արդարադատութեան նախարարութիւնը ներկայացուած ծրագիր կանոնագրին մէջ
կարգ մը փոփոխութիւններ կ'առաջարկէ, որ(ոնք) կը կատարուին ընդհանուր անդա-
մական ժողովին մէջ: Ատկէ յետոյ, 1918 Հոկտեմբեր 10ին, վաւերացման պաշտօնա-
կան հրամանագիր կը հրատարակուի եւ Պ[ուենոս] Այրեսի գաղութային մարմինը
կը ճանչցուի կառավարութեան կողմէ «Լա Բոլեքթիտաստ Ռեյիսիտաս Արմենիա-
նա» անունով» (Արծրունի, էջ 18): Հեղինակը, որ այս շրջանի տեղեկութիւններուն
մէջ ընդհանրապէս հետեւած է Արսլանին, հոս շփոթած է եւ Հայ Ազգային Միութեան
ճանաչումի թուական տուած է Եկեղեցոյ Վարչութեան վաւերացումին թուականը:
48. Արսլան, Փետրուար 1942, էջ 30:
49. Հայ Ազգային Միութեան կեդրոնը հաստատուած էր Խաչիկեանի գրասենեակը
(փողոց Սուխիաչա 117), Խաչիկեան նաեւ կը հոգար անոր բոլոր ծախսերը «Տխրու-
նի», *Հայ Կեդրոն*, Պուենոս Այրես, Յունուար 1933, էջ 15:
50. "Unión Nacional Armenia", La Nación, Buenos Aires, 7 de noviembre de 1918, հմմտ.՝
"La prensa argentina...", էջ 6:
51. Beylerian, էջ 711:

52. Արսլան, Ապրիլ 1942, էջ 55:
53. Beylerian, էջ 720:
54. Արսլան, Մարտ 1942, էջ 41:
55. "Por la independencia de Armenia", *La Epoca*, Buenos Aires, 16 de enero de 1919, հմմտ. "La prensa argentina..." էջ 6:
56. Արսլան, Մարտ 1942, էջ 40:
57. Թոփչեան. 16 Յունիս 1934, էջ 2, հմմտ. Binayan, էջ 91, որ նախապես Արսլանեանի մեկնումը թուագրած էր 1916ին (Narciso Binayan, *Los armenios en la Argentina*, Buenos Aires, էջ 27):
58. Արսլան, Մարտ 1942, էջ 40:
59. *Տարեցոյց*, էջ 18: Կուսակցութեան տոմարը կը նշէ այդ թիւը, բայց առանց թուականի. տես՝ «Պ. Այրէսի», 30 Յունուար 1970, էջ 1: Հարիւրյիսուն կամատրներու մեկնումը նաեւ ունեցած է 1917 թուագրումը որ կասկածելի է (Հայկ Մոսկոֆեան, «Պունտո Այրէսի գաղութին նախապատմականը», *Հայ Կեդրոն*, Պունտո Այրէս, Յունուար 1933, էջ 6):
60. "Por la independencia de Armenia", *La Epoca*, Buenos Aires, 16 de enero de 1919, հմմտ. "La prensa argentina..." էջ 6:
61. Արսլան, Ապրիլ 1942, էջ 55:
62. *Տեղը*, էջ 211–212:
63. Արսլան, Ապրիլ, 1942, էջ 55–56: Արսլան իր մասնագիտութիւնը փափաքած է ի սպաս դնել հայրենիքի վերաշինութեան: 4 Օգոստոս 1919ին նամակ մը գրած է Պօղոս Նուպարին, ուր նշած «... ժամանակէ մը ի վեր մեր տարաբաղդ հայրենակիցներու ներգաղթը սկսած լինելով, ամենէն աւելի զգալի պակասներէն մին է, ըստ իս, մեր հայրենակիցներու բնակարանի խնդիրը, որովհետեւ, բացի գոյութիւն ունեցող բնակարաններուն առողջապահական տեսակետով շատ անգոհացուցիչ վիճակի մը մէջ գտնուողներէն, զգալի է մանաւանդ շատ մը նոր շէնքերու պէտքը, քանի որ հանրային առողջապահութեան համար մեծ վտանգ են ընտանիքներու չտիւազանց խճողումները: Բաց աստի, շատ հաւանականաբար նորանոր գիւղեր եւ քաղաքներ պիտի հիմնարկուին մօտաւոր [sic] ապագայի մը մէջ, հետեւաբար, այժմէն իսկ պէտք է մասնատր հոգածութեան առարկայ ընել խիստ հսկողութեան ենթարկելով ամէն նոր շինութիւններ որոնք պէտք է համապատասխանեն յատկապէս պատրաստուած ծրագրի մը, գոհացնելով Salubritéի, Stabilitéի եւ Esthétiqueի վերաբերեալ ամէն պայմաններ եւ պէտք է գտնուին այս նպատակաւ կարգուած մասնատր քննիչներու հսկողութեան ներքեւ: Այսու՝ Նոր Հայաստանի վերաշինութիւնը պէտք է սկսի մասնատրապէս յատակագծուած նոր քաղաքներով, որպէսզի ապագային հարկ չը մնայ բարենորոգմանց աւելորդ ծախսերու: Մնունդի եւ զգեստեղէնի անմիջական պէտքերը հոգացուելու վրայ են, ինչպէս նաեւ բժշկական մարմիններ եւ դեղեր փութացուեցան ՚ի Հայրենիք: Այսուհանդերձ, բնակարանի կարեւոր հարցը որ այնչափ կենսական լինելով, արդեօք [sic] Ազգային] Պատուիրակութիւնը մտադի՞ր է այդ մասին ռուս մասնագէտներու աջակցութեանը դիմել, կազմելով ճարտարապետներէ բաղկացեալ մասնախումբ մը, որպէսզի այժմէն իսկ տեղույն վրայ ուսումնասիրէ մեր հայրենակիցներու բնակարանի խնդիրը, քանի որ առողջ եւ տոկոս սերունդ մը պատրաստելու համար պէտք է այժմէն իսկ հիմը դնել առողջապահիկ բնակարաններու, մանաւանդ դիւրացնելով աշխատատր դասակարգի բնակարանի խնդիրը, ինչ որ բացի ազգային պարտականութիւն մը լինելէ՝ մեր երկրի բարօրութեան ու բարգաւաճման առաջին պայմաններէն մին կը կազմէ: Փարիզի ճարտարապետական վարժարանէն վկայեալ եւ 1910ի սկիզբէն ՚ի վեր տեղույս մէջ ճարտարապետութեամբ զբաղելու վրայ լինելով, արուեստիս

վերաբերել ամեն կերպ փորձառութիւններ ձեռք ծգած են, մասնաւոր ուսումնասիրութիւններու առարկայ ընելով Salubritéի վերաբերել ամեն խնդիրներ. միշտ նկատի ունենալով մեր երկրի ապագայ պէտքերը: Հետեւաբար, սիրայօժար յանձն պիտի առնէի իմ ամբողջ կարողութիւններս դնել ՚ի սպաս Հայրենիքիս, ինձ համար ամենամեծ վարձատրութիւնը համարելով օգուտ մը կարենալ մատուցանելս մեր տարաբաղդ հայրենակիցներու, որոնք պիտի կազմեն վաղուան մեծ Հայաստանը»:

8 Մեպտեմբերին, Պօղոս Նուպար պատասխանած է, թէ "Il serait premature de prendre actuellement des décisions à cet égard et tant que la Conférence de la Paix ne sera définitivement prononcée sur le sort de l'Arménie et n'aura désignée la Puissance Mandataire. J'ai toutefois fais prendre bonne note de vos offres de services et de vos propositions qui seront examinées en même temps que toutes celles de même nature que nous avons reçues, quand l'heure en sera venue" (մամակներուն բնագիրերը տես՝ ՊՊԿԱ, ֆ. 430, ց. I, գ. 647):

64. Binayan, էջ 95:

65. Steu J.H.T., Editorial Prefatory to "Maintenance of Peace in Armenia: A Senatorial Subcommittee Debates SJR 106, "The Williams Resolution", Sept. 29 & Oct. 2, 1919 (part I), *Armenian Review*, Boston, December 1980, p. 414.

66. Արսլան, Ապրիլ, 1942, էջ 56:

67. Թովչեան, 24 Յունիս 1934, էջ 2 (տարեթիւը սխալմամբ գրուած է 1919):

68. *Circular Informativo Mensual del Ministerio de Relaciones Exteriores y Culto*, Buenos Aires, junio de 1920, էջ 380: Թուականի մասին շփոթ մը կայ, թեւ 3 Մայիս տպուած է *Պաշտօնական Տղեկագրոյին* մէջ ("Actos del Poder Ejecutivo", *Boletín Oficial*, Buenos Aires, 25 de junio de 1920. հմմտ.՝ լուսանկարչական պատճենը՝ Hassasian, էջ 13). սակայն 2 Մայիսին *Lu Փրենսս* օրաթերթը կը հարորդէր, որ «երկրտան հրամանագրով, արժանթիւնեան կառավարութիւնը ճանչցաւ Հայաստանի նոր պետութեան անկախութիւնը: Այս որոշումը ծանուցուեցաւ այդ նոր հանրապետութեան հիւպատոսական գործակալին, որ իր կառավարութեան անունով մերինին մօտ դիմումները կատարեց այդ երկրի պաշտօնական ճանաչումին համար», իսկ 3 Մայիսին *Lu Էփոքս* կը գրէր, թէ նախագահը Արժանթինի ու Պրագիի հայերու բազմաթիւ շնորհատրական հեռագիրեր ստացած էր (տես՝ "Le República de Armenia", *La Prensa*, Buenos Aires, 2 de mayo de 1920; "Ecos del reconocimiento de la República de Armenia. Telegramas de gratitud al presidente", *La Epoca*, Buenos Aires, 3 de mayo de 1920. հմմտ.՝ "Firme apoyo de la República Argentina a la independencia de Armenia", *Armenia*, Buenos Aires, 24 de mayo de 1983, էջ 5):

69. "La República Armenia. Solicitud de su reconocimiento", *La Nación*, Buenos Aires, 28 de abril de 1920 (հմմտ.՝ "Firme apoyo de la República Argentina...", էջ 5):

70. *Circular Informativo Mensual del Ministerio de Relaciones Exteriores y Culto*, Buenos Aires, junio de 1920, էջ 381:

71. Արսլան, Ապրիլ, 1942, էջ 56:

72. *Տարեցոյց*, էջ 21. Binayan, էջ 97. Hassasian, էջ 13:

73. "Aniversario de la República de Armenia", *La Razón*, Buenos Aires, 1º de junio de 1920. հմմտ.՝ "Firme apoyo de la República Argentina...", էջ 5: Այդ սրահը կը պատկանէր իտալական գաղութին:

74. Արսլան, Ապրիլ, 1942, էջ 56. հմմտ.՝ Արծրունի, էջ 21: Թովչեան (24 Յունիս 1934, էջ 2), այդ ձեռնարկին որպէս վայր կը նշէ «Քասա Մոխաս» (գոիցերիական գաղութի սրահ). ըստ իրեն, հոն հաւաքուած է 10000 փետօ, որ կէս առ կէս դրկուած է Ալեոխ Սիարոնեանին (Հանրապետութեան Պատուիրակութիւն) եւ Միիրան Տամատեանին (Կիլիկիոյ ինքնապաշտպանութիւն). վերջինիս յղուած գումարը իբրեւ թէ ուրիշ մէկը

- իր անունով ստացած է ու յափշտակած: Այս կետը կասկածելի կը թուի:
75. «Պ. Այրեսի», 30 Յունուար 1970, էջ 1:
 76. Binayan, էջ 97: Պինայեան կը մէջբերէ հեռագիրը սպաներէն, առանց աղբիւր յիշելու: Չայն կը թուագրէ 29 Մայիս, թէն մեր կարծիքով ասիկա մակաբերուած է Արսլանի յիշեալ վկայութենէն: Այդ պատճառով, կ'ենթադրենք, որ բուն թուականը պէտք է 4 Յունիս ըլլայ:
 77. Ըստ Բարսեղ Էօրեմեանի վկայութեան, «տղաքը մեկնած էին Երոպա՝ դաշնակցականավայել առնականութեամբ կամաւոր արձանագրուելով: Մնացած էինք 1918 թ. հինգ հոգի, բայց կը պահէինք մեր ակումբը, վարձքը վճարելով մեր քսակէն, եւ այս՝ երեք տարի շարունակ, մինչեւ որ զինադադարէն վերջ սկսաւ գաղթը». տես՝ Ս. Յ. Թերզեան, «Արմենիայի երկունքը», *Արմենիա*, Պոլսէնու Այրես, 27 Յուլիս 1942, էջ 5:
 78. «Պ. Այրեսի», 30 Յունուար 1970, էջ 1:
 79. Binayan, էջ 97: Միսալ է 1919 թուագրումը (հմմտ. Եղիազար Խաչերեան, «Մահ ընկեր Միսաք Փննիկեանի», *Արմենիա*, Պոլսէնու Այրես, 15 Սեպտեմբեր 1964, էջ 2): Հասասեան, քիրիմացաբար, այս յանձնախումբին կը վերագրէ Ազգային Միութեան ժամանակաւոր վարչութեան հանգամանքը, որ իբրեւ թէ 17 Հոկտեմբեր 1920ի ընդհանուր ժողովին կանչած է (Hassasian, էջ 13):
 80. Թովչեան, 24 Յունիս 1934, էջ 2: Մեզի անյայտ աղբիւրի հիման վրայ, Պինայեան կը գրէ, թէ ներկայ եղած է 130 հոգի եւ հաւաքուած՝ 26185 ֆրանք. Binayan, էջ 97:
 81. Արսլան, էջ 56–57 (նշուած են ծրագրի բոլոր կետերը): Թիրիմացաբար, Հերիմեան այս ժողովը 1920 Մարտ կը թուագրէ. Hekimian, էջ 101:
 82. 1919 Փետրուարին կազմուած է Հայ Ռամկավար Կուսակցութեան վարչութիւնը, որ 1920 Յուլիսին լուծուած կը նկատուէր, քանի որ ժողովը որոշած է զայն եւս ներառնել դիւանին մէջ. «Երբ ի վիճակի ըլլան ներկայացուցիչ դրկելու». Արսլան, էջ 57, նաեւ՝ «Պ. Այրեսի» 30 Յունուար 1970, էջ 1:
 83. «Պ. Այրեսի» էջ 1:
 84. Ըստ Թովչեանի, Արսլան նաեւ վարիչ ու խորհրդական էր Ազգային Միութեան սկզբնական կազմին մէջ. Թովչեան, էջ 2:
 85. Արսլան, Մայիս 1942, էջ 74:
 86. Թովչեան, 24 Յունիս 1934, էջ 2. հմմտ. Binayan, էջ 97:
 87. Binayan, էջ 97–98:
 88. «Պ. Այրեսի», 6 Փետրուար 1970, էջ 1:
 89. *Արժեւորիչական Մասնույ* շաբաթաթերթ, Պոլսէնու Այրես, 16 Ռեպտեմբեր 1923, էջ 2:
 90. «Տիրումի», էջ 15:

THE ARMENIAN NATIONAL UNION OF BUENOS AIRES
(1918-1920)
(Summary)

VARTAN MATIOSSIAN

An Armenian umbrella organization, the Armenian National Union (ANU), was created in the United States in 1917. It was composed of representatives of the Armenian religious denominations, the political parties and the Armenian General Benevolent Union. Its Argentinian counterpart was born in the first months of 1918, but after a short existence it had to be recreated in September of the same year. The ANU Argentina Chapter actively promoted the Armenian Cause and became the official representative of the Armenians in Argentina. Nevertheless, the divisions within the North American ANU triggered a political crisis in the Argentinian Chapter, which was reorganized in June 1920 under the name of "Armenian National Union of Argentina". However, the Social Democrat Henschakian Party and the Armenian Revolutionary Federation did not accept to resume their association to the Union and the latter practically ceased to exist. Henceforth, it continued nominally till 1928 merely as a vehicle to furnish official documentation to the Armenian refugees and immigrants to Argentina.